


Հաստատված է
«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի
2007թ. հուլիսի 12-ի մասնակիցների
թիվ 22 ժողովի թիվ 8 որոշմամբ
Մասնակիցների ժողովի նախագահ՝
Սամվել Հակոբյան

Փոփոխված է
«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի
2007թ. հոկտեմբերի 31-ի մասնակիցների
թիվ 23 ժողովի թիվ 5 որոշմամբ
Մասնակիցների ժողովի նախագահ՝
Արտավազ Յախշիբեկյան

Փոփոխված է
«Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի
2007թ. դեկտեմբերի 18-ի մասնակիցների
թիվ 24 արտահերթ ժողովի թիվ 1 որոշմամբ
Մասնակիցների ժողովի նախագահ՝
Արտավազ Յախշիբեկյան



ԿԱՐԳ

Ապահովագրավճարների ստացման, պահպանման և ապահովագրողին և/կամ
վերաապահովագրողին համապատասխան վճարների փոխանցման

Սույն կարգը կանոնակարգում է «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ի (Բրոքեր) գլխավոր
հաշվապահի, հաշվապահի և այլ աշխատակիցների կողմից ապահովագրավճարների ստացման,
պահպանման և ապահովագրողին և/կամ վերաապահովագրողին վճարների փոխանցման համար
պահանջվող գործողությունների ցանկը և դրանց հաջորդականությունը:

Սույն կարգը ուղեցույց է հանդիսանում Բրոքերի աշխատակիցների համար և պարտադիր է
կատարման ապահովագրավճարների և վերաապահովագրավճարների փոխանցումով վճարումները
Բրոքերի միջոցով իրականացնելու դեպքերում:

Ապահովագրավճարների և վերաապահովագրավճարների վճարումների փոխանցման իրականացումը Բրոքերի միջոցով կանխիկով կարող է կատարվել միայն Բրոքերի գործունեության տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով սահմանված պահանջները բավարարելուց և կանխիկով գործառույթներ իրականացնելու վերաբերյալ սույն կարգի մեջ փոփոխություններ մտցնելուց հետո:

1. Ապահովագրավճարների ստացումը և վճարումը

Յուրաքանչյուր հաճախորդին, ապահովագրական բրոքերային ծառայություններ մատուցելու ընթացքում, տեղեկացնել, որ ապահովագրավճարների մուծման հարցում նախապատվություն է տրվում փոխանցման միջոցով ապահովագրավճարը անմիջապես ապահովագրող ընկերությանը վճարելու ձևին:

Բրոքերը կարող է ստանալ ապահովագրողից ապահովագրավճարը՝ ապահովագրողին փոխանցելու համար:

Այդ դեպքում անհրաժեշտ է՝

- ճշտել ապահովագրողի կողմից թողարկված վկայագրում նշված ապահովագրավճարի գումարի չափը և վճարման կարգը,
- ճշտել ապահովագրողի և ապահովագրողի հետ ձեռք բերված պայմանավորվածությունը բրոքերային միջնորդավճարի գումարի չափի և վճարման կարգի մասին,
- ապահովագրողի հետ ճշտել հավաքագրված ապահովագրավճարների փոխանցման հաճախականությունը և ժամկետները և տեղեկացնել ապահովագրողին վճարման ժամկետների մասին,
- անհրաժեշտության դեպքում կազմել ապահովագրավճարների և բրոքերային միջնորդավճարի վճարման ժամանակացույց և համաձայնեցնել ապահովագրողի հետ,
- նախապատրաստել վճարման հաշիվ, որում առանձին արտացոլել ապահովագրավճարների և բրոքերային միջնորդավճարների գումարները,
- Ապահովագրողի կողմից Բրոքերին վճարված և Ապահովագրողին պատկանող ապահովագրավճարների գումարները տեխնիկապես հնարավորինս կարճ ժամկետներում, բայց ոչ ուշ, քան ապահովագրավճարը ստանալուց հետո 2 բանկային օրվա ընթացքում առանձնացնել և հավաքագրել առանձնացված հաշվարկային հաշվում,
- Բրոքերի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առանձին հաշվեգրել ապահովագրական վճարների և բրոքերային միջնորդավճարների գումարները,
- ապահովագրողին ապահովագրավճարների մուծումը նպատակահարմար է կատարել բանկային փոխանցման միջոցով: Վճարումից առաջ մեկ անգամ ևս ճշտել ապահովագրողի համաձայնությունը վճարել ապահովագրավճարները և շարունակել ապահովագրության պայմանագրի գործողությունը,
-

- ապահովագրողի հետ ապահովագրավճարների մուծման ամսական մեկից ավելի գործարք լինելու դեպքում, ապահովագրողի հետ համաձայնացնել ամսական ամփոփագրի ներկայացումը, բովանդակությունն ու ժամկետները,
- բոլոր այն ապահովագրողների հետ, որոնց ապահովագրավճարները վճարվել են Բրոքերի միջոցով, յուրաքանչյուր եռամսյակ ստորագրել փոխադարձ հաշվարկների ակտ:

2. Վերաապահովագրավճարների ստացումը և վճարումը

Յուրաքանչյուր վերաապահովագրվողին, բրոքերային ծառայություններ մատուցելու ընթացքում, տեղեկացնել, որ վերաապահովագրավճարների մուծման հարցում նախապատվությունը տրվում է փոխանցման միջոցով վերաապահովագրավճարներն անմիջապես վերաապահովագրող ընկերությանը վճարելու ձևին:

Բրոքերը կարող է ստանալ վերաապահովագրվողից վերաապահովագրավճարները՝ վերաապահովագրողին փոխանցելու համար:

Այդ դեպքում անհրաժեշտ է՝

- ճշտել վերաապահովագրության պայմանագրում նշված վերաապահովագրավճարի գումարի չափը, վճարման կարգը և ժամկետը,
- անհրաժեշտության դեպքում կազմել վերաապահովագրավճարների և բրոքերային միջնորդավճարի ստացման ժամանակացույց և համաձայնացնել վերաապահովագրվողի հետ,
- վերաապահովագրողի հետ ճշտել հավաքագրված վերաապահովագրավճարների փոխանցման հաճախականությունը և ժամկետները և տեղեկացնել վերաապահովագրվողին վճարման ժամկետների մասին,
- ուշադրություն դարձնել վերաապահովագրողի հետ ստորագրվող և նրանից ստացվող փաստաթղթերում վերաապահովագրավճարների, ոչ ռեզիդենտի շահութահարկի և վերաապահովագրողի կողմից սահմանված պարգևավճարների և/կամ միջնորդավճարների առանձին և ճիշտ ձևակերպմանը,
- նախապատրաստել վճարման հաշիվ, որում առանձին արտացոլել վերաապահովագրավճարը, ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկի և բրոքերային միջնորդավճարների գումարները,
- Բրոքերի կողմից ստորագրված գլխավոր պայմանագրով վճարվող վերաապահովագրավճարի գումարները վավերացնել վերաապահովագրվողների հետ ստորագրվող ամսական ամփոփագրերով,
- Բրոքերի հաշվին հավաքագրված վերաապահովագրավճարների գումարները ճշտելու և վավերացնելու նպատակով վերաապահովագրողների հետ ստորագրել ամսական և/կամ եռամսական ամփոփագիր (բորդերո),
- վերաապահովագրվողի կողմից Բրոքերին վճարված և վերաապահովագրողին պատկանող վերաապահովագրավճարների գումարները երկու բանկային օրվա ընթացքում փոխանակել համապատասխան արտարժույթի և հավաքագրել առանձնացված հաշվարկային հաշվում,

- բոլոր այն վերաապահովագրողների հետ, որոնց վերաապահովագրավճարները վճարվել են Բրոքերի միջոցով, յուրաքանչյուր ամիս և/կամ եռամսյակ ստորագրել փոխադարձ հաշվարկների ակտ,
- բոլոր այն դեպքերում, երբ փոխադարձ հաշվարկների ակտի հիման վրա վերաապահովագրողին է փոխանցվում` հայցերի հատուցման գումարի իր մասնաբաժնի և իրեն հասանելիք փաստացի վերաապահովագրավճարի գումարի դրական տարբերությունը, առանձին ուշադրություն դարձնել, որպեսզի 5% ոչ ռեզիդենտի շահութահարկը հաշվարկվի վերաապահովագրողին հասանելիք փաստացի վերաապահովագրավճարի ամբողջ գումարից: